

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԽԼՂԱԹՅԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԶՈՐՐՈՐԴ  
ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի հյուրեր, ավագանու անդամներ, համագյուղացիներ.

2013 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում Տարոնիկ համայնքում իրականացվել են աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը:

2013 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում Տարոնիկի գյուղապետարանը իրականացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության, Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից ընդունած որոշումները զգալի աշխատանքներ է իրականացրել համայնքի առջև դրված խնդիրների բարեհաջող լուծման համար: Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման հարցերը: Համայնքի փողոցներում ամենօրյա գրաֆիկով կազմակերպվում է աղբահանություն պահպանելով համայնքի սանիտարահիգիենիկ նորմերը հոկտեմբերի 4-ին Ուսուցչի տոնի կապակցությամբ դպրոցում կազմակերպվել է միջոցառում դպրոցի ողջ կոլեկտիվի և գյուղապետարանի աշխատողների մասնակցությամբ և ուսուցիչներին տրվել են նվերներ և ծաղկեփնջեր: Կազմակերպվել է Նոր Տարվա միջոցառում միջնակարգ դպրոցում և 1-ից 4-րդ դասարանի թվով 120 երեխանների և համայնքի մինչև 6 տարեկան թվով 140 երեխանների տրվել են նվերներ:

Դեկտեմբերի 31-ին կազմակերպվել է Նոր Տարվա միջոցառում տոնական հրավառությամբ:

Համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվում է ամենօրյա ընդունելություն:

2013 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի ավագանու կողմից կայացել է թվով երկու միստ, որոնց որոշումները հաստատվել են առանց առարկումների:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 5 որոշում և արձակվել է 9 կարգադրություն:

Համայնքի բնակչությանը գյուղապետարանի կողմից տրամադրվել է թվով 520 բազմաբնույթ տեղեկանքներ:

Ստացվել է 57 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և պատասխանվել ըստ կարգի:

Գյուղապետարանից ուղարկվել է 10 պաշտոնական գրություն:

- Ստացվել է 9 դիմում, որոնք քննարկվել են և ստացել համապատասխան լուծում:
- Պարբերաբար կազմակերպվում է համայնքի հանրային և սննդի առևտրային կետերում ստուգումներ, որոնք համապատասխան եզրակացություններով, կից գրությունով ամեն եռամսյակ ուղարկվում է մարզպետարան:
- Համայնքի ղեկավարին է դիմել համայնքի բնակչության մեծ մասը տարբեր կենցաղ կոմունալ հարցերով և ստացել բավարար պատասխաններ իրենց հուզող հարցերի շուրջ:
- Կատարվել է համայնքի տարածքով անցնող ոռոգման կիսախողովակի մաքրման, մանկապարտեզի 2-րդ խմբի, խաղահրապարակի և կարոտելների, Առատաշեն- Ակնալիճ-Տարոնիկ միջհամայնքային ճանապարհի փոսալցման և ավտոկանգառներում գտնվող տաղավարների վերանորոգման աշխատանքներ:
- Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 17 անձից որոնցից ութը համայնքային ծառայողներ են, մեկը համայնքի ղեկավարի տեղակալ, պայմանագրային և տեխնիկական աշխատողներ:
- Գյուղապետարանի ենթակայության տակ գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են 30 երեխա:
- Համայնքը ունի գրադարան 3429 կտոր գրականությամբ, որից օգտվում են 850 ընթերցողներ :

Ֆինանսական բաժին – 2013 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում վճարվել է 5070.5 դրամ աշխատավարձ: Համայնքի առավել անապահով բնակիչներին տրամադրվել է սոց. օգնություն 410.0 հզ. դրամ, աղբահանման աշխատանքների համար ծախսվել է 760.0 հզ. դրամ: Սպորտ և երիտասարդական ծրագրեր հողվածից ծախսվել է 1297.0 հզ. դրամ:

Կատարվել են այլ ծախսեր ապարատի պահպանման, ապրանքների գնման և ծառայությունների ձեռք բերման համար:

2013 թվականի համար հողի հարկը նախատեսվել է 4500.0, որից հավաքագրվել է 5210.3 հզ դրամ 115.7 %, որից 4174.2 հհ դրամ 4-րդ եռամսյակի ընթացքում: գույքահարկը նախատեսվել է 2675.0, որից հավաքագրվել է 4053.4 դրամ՝ 151.5 % , որից 2891.3 հզ դրամ 4-րդ եռամսյակի ընթացքում: վարձակալական հողի վարձավճարը նախատեսվել է 200.0 հզ դրամ որից հավաքագրվել է 151.0 հզ. դրամ՝ 75.5%: տեղական տուրքերի տարեկան պլանը նախատեսված է եղել 158.0 հզ. դրամ, որից հավաքագրվել է 233.0 հզ. դրամ: Սեփական եկամուտների 7533.0 հզ. դրամի դիմաց հավաքագրվել է 9660.7 հզ դրամ և տարեկան պլանը կատարվել է 128.2 %-ով: